«ԵՐԵՎԱՆԻ ԳԱԳԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ №135 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում**

Առարկա՝ **Ֆիզիկա**

Ուսուցիչ՝ **Երևանի Մովսես Խորենացու անվան** 143 **հիմնական դպրոց Սարգսյան Սոնա Յուրիի**

Վերապատրաստող՝ **Գալստյան Յուրի**

ԵՐԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

1.1 ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ 3

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՄԱՆ ԴԵՐԸ՝ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ, ՁԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ 5

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 7

4. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 12

5. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15

6. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակությունը խղճի գործն է, կրթությունը՝ գիտության: Հետագայում, արդեն ձևավորված մարդու մեջ ճանաչողության այդ երկու տեսակները լրացնում են միմյանց:

Վ. Հյուգո

Մարդկության ապագան կախված է աճող սերնդի դաստիարակությունից և կրթությունից: Դրանք այն կարևոր գործոններն են, որոնք անհատին դարձնում են համակողմանի զարգացած, կրթված, շրջապատի նկատմամբ պատասխանատվության զգացումով օժտված անձ: Արդի կրթական բարեփոխումներն օգնում են ուսուցչին ժամանակի պահանջներին համաքայլ գնալ: Կրթության և դաստիարակության մեջ կան այնպիսի դժվարություններ, սխալ դրսևորումներ, որոնց դեմ ուսուցիչը միայնակ չի կարող պայքարել: Նրան անհրաժեշտ է վերապատրաստվել, հարստացնել գիտելիքները, ստանալ մեթոդական աջակցություն, համագործակցել սովորողների, ծնողների հետ՝ երեխաների կրթության, ընտանեկան դաստիարակության հարցերում:

1.1 ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտման հիմնական նպատակը ծնողի ներգրավվածությունն է ուսուցման գործընթացում, փոխհամագործակցությունը: Դառնալով ուսուցչի աջակիցը, լավատեղյակ լինելով դպրոցի գործունեությանը՝ ծնողը կարող է լուծել շատ խնդիրներ՝

- ավելի լավ ճանաչել իր երեխային,
- ուսումնասիրել այն միջավայրը, որտեղ գտնվում է իր երեխան,

- սովորողի անձի ձևավորման վրա ազդել և համարժեք վերաբերմունք ձևավորել՝ փոխանցելով աճող սերնդին բարոյահոգեբանական շատ արժեքներ,
- ցուցաբերել օբյեկտիվ մոտեցում և այլն:

Ուսուցչի առաքելությունն ակնկալում է աշակերտների և նրանց ծնողների հետ համագործակցելով բարձրացնել աշակերտների առաջադիմությունն ու ձեռքբերումները, աջակցել նրանց ներգրավվածությունը ինքնազարգացման և ուսումնառության մեջ, ինքնարտահայտմանը, հաղորդակցմանը: Հիմնվելով սեփական փորձի վրա՝ սովորողները կկարողանան կառուցել իրենց գիտելիքները, ստեղծագործական գործունեությամբ կակտիվացնեն ներուժը:

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում են ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: «Ծնող» ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր. ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք՝ հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման ու կրթության համար, սակայն նրանցից բացի, հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, խորթ մայրը, խորթ հայրը, խնամակալը և այլն: Այս փաստաթղթում «ծնող» եզրույթը նկատի ունի բոլոր այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման ու բարօրության համար:[1]

[1] http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf 2015թ էջ4

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՄԱՆ ԴԵՐԸ՝ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Միասնական աշխատանքով ստացված, գիտության կողմից կուտակված գիտելիքները շարունակ աճում են, դառնում ավելի խորը ու հենարան են ծառայում առաջադիմելու, ստեղծագործական ուժերն անվերջ զարգացնելու համար:

Մ. Գորկի

Երեխայի դաստիարակության հիմնաքարը դրվում է ընտանիքում, ապա ձևավորվում և զարգանում դպրոցում: Ծնողն է այն հիմնական շարժիչ ուժը, որ, կանգնած լինելով ուսուցչի կողքին, համագործակցելով նրա հետ, իր համոզիչ և հիմնավորված խոսքով երեխայի մեջ սերմանում է սեր և հարգանք իր ազգի, դպրոցի, ուսուցիչների, դասընկերների նկատմամբ, ջանքեր չի խնայում իր երեխային ճիշտ ուղորդելու, կրթական և դաստիարակչական խնդիրները կատարելու հարցում: Ուսուցիչն ու ծնողը իրենց մշակած պլանով ճիշտ և արդյունավետ իրականացնելով համագործակցությունը, սահմանած պահանջների պահպանումը, համատեղ ընդունած որոշումների կատարումը, կապահովեն սովորողների ուսման առաջադիմությունը, կրթության և դաստիարակության աստիճանական զարգացումը:

Ծնողի և ուսուցչի միջև անգնահատելի նշանակություն և արդյունավետություն ունեն փոխադարձ հարգանքը, դժվարությունների և անհաջողությունների միասնական հաղթահարումը: Ուսուցման ողջ գործընթացի հիմնարար աշխատանքն է ուսուցչի՝ պարբերաբար տեղեկությունների տրամադրումը ծնողներին՝ սովորողների ուսումնառության, վարքագծի վերաբերյալ, ինչպես նաև խորհրդատվությունները, դիտարկումներն ու քննարկումները, նրանց կրթական կարիքների առնչությամբ ճիշտ լուծումներ գտնելը, ուսուցչի և ծնողի միասնական աշխատանքում միմյանց աջակցելը,

որոնք մեծ նշանակություն ունեն սովորողների կրթության և դաստիարակության բնականոն զարգացման համար:

«Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով»[2]:

Այն ծնողը, որը մասնակցում է դպրոցի կազմակերպչական և դաստիարակչական աշխատանքներին, ծանոթանում է ինչպես դաստիարակության, այնպես էլ կրթության արդի խնդիրներին, նրա մոտ ձևավորվում են դաստիարակչական հմտություն, բարոյահոգեբանական գիտելիքներ, մանկավարժական մտածելակերպ: Ծնողի ներգրավումը, անմիջական վստահելի հարաբերությունը և մասնակցությունը դասարանային կյանքին նպաստում են սովորողի ուսումնառության գործընթացում հույսով ներշնչվելուն, իր ուժերի նկատմամբ հավատ ունենալուն, ճիշտ ճանապարհ ընտրելուն, ինքնակազմակերպվելուն, իր ժամանակը կառավարելուն, գիտելիքներն ու հմտությունները, լավ սովորույթները յուրացնելուն: Սովորողը արժևորում է պարտքի զգացումը, սեփական պարտականությունների կատարումը:

Այս գործընթացը ապահովում է կրթական մակարդակը, ձևավորում և զարգացնում է սովորողի ինքնուրույն ստեղծագործաբար աշխատելը, օգնում տրամաբանելով դատողություններ անել ու մտքերը ճիշտ ձևակերպել:

[2] www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 28, կետ 1, ենթակետ 2:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Նախապես լավ ճանաչելով իր ընտանիքը՝ ծնողը պետք է դիտարկի երեխայի հիմնական և գլխավոր հոգեբանական խնդիրները:

Երեխայի բնավորությունը ձևավորվում է ընտանիքում: Նա տեսնում է ընտանիքի անդամների վարքագիծը, վերաբերմունքը միմյանց նկատմամբ և սկսում է նմանվել նրանց: Ընտանեկան ջերմ ու մտերիմ հարաբերություններում երեխան մեծանում է որպես լիարժեք անձ, իսկ իրար չհասկացող, նեղացնող, միմյանց հետ վիճող ընտանիքում խախտվում է երեխայի հոգեկան աշխարհը. նա դառնում է կոպիտ, կռվարար, ագրեսիվ: Դրականը հանգեցնում է մանկավարժական գնահատման չափանիշներին, իսկ բացասական վերաբերմունքը ստեղծում է դժվարություններ, որի հետևանքով սովորողը, դառնում է պասիվ: «Մեծ չարիք է ստորացնել մարդու արժանապատվությունը,- գրել է հույն փիլիսոփա, գրող Լուկիանոսը: -Մենք հոգում ենք երեխաների ուսման և դաստիարակման մասին, որպեսզի լավը դառնա շատ ավելի լավ, իսկ վատը փոխվի և դառնա լավ»[3]: Այստեղ անհրաժեշտ է մանկավարժական մոտեցում. նախապես օբյեկտիվ ուսումնասիրելով երեխայի ընտանիքը՝ ուսուցիչը պետք է ծնողի հետ հարգանքով խոսի, ընդունի նրա ճիշտ առաջարկները, հօգուտ երեխայի արտահայտվի, ծնողի հետ քննարկի երեխայի պահվածքը՝ երբեք չհամեմատելով մյուս ընկերների հետ, նրան դրականորեն տրամադրի, վատ արարքի մասին չհայտարարի, այլ ծագած խնդիրը քննարկի, լուծման ուղիներ գտնի, օգնի երեխային հաղթահարելու տարիքային ճգնաժամը:

Կան դեպքեր, երբ ծնողի ու ուսուցչի կողմից անհիմն դժգոհություններն ու դիտողությունները, չափազանց խստապահանջկոտությունը սովորողների մոտ առաջացնում են չլսելու, չսովորելու, չենթարկվելու հատկանիշներ, սխալ մտածելակերպ:

Երբեմն ծնող-երեխա փոխհարաբերությունում է խնդիր առաջանում և ծնողն իրեն է մեղադրում, հաճախ սեփական ուժերին և հնարավորություններին անվստահություն ցուցաբերում, մտածում է, թե որտեղ է սխալվել: Ծնողը պետք է ընդունի երեխային այնպիսին, ինչպիսին նա կա և դրականորեն ազդի նրա

[3] Վ.Վ. Վորոնցով «Բանականության սիմֆոնիա» էջ 195

զարգացմանը, որ երեխան հոգեպես առողջ մեծանա: Նա պետք է չանտեսի սովորողի հոգեկան գործընթացը, անձնային որակների զարգացումը, դրական վերաբերմունքը, հպարտ, համարձակ, սկզբունքային լինելը: Ծնողը պետք է հասկանա երեխային. ամեն սխալի համար չէ, որ պետք է պատժի, բարկանա կամ վիրավորի: Վերջինս պետք է հատկապես համբերատար և հետևողական լինի, օբյեկտիվ վերաբերմունք ցուցաբերի, երեխային օգնի, որ ապահով զգա, ինքնավստահ լինի, ինքնագնահատականը բարձրացնի: Սուխոմլինկսին ասել է. «Մարդուն մի՛ պատճառիր չարիք, վիրավորանք, ցավ, անհանգստություն»[4]: Այո՛, որքան երեխայի ինքնագնահատականը իջնի, վիրավորանք, ցավ, շատ դեպքերում՝ անհիմն դիտողություններ, անհարկի պատիժներ և պահանջներ ներկայացնի ծնողը, այնքան ավելի կդժվարանա կողմնորոշվելու իր մոտեցման մեջ: Ուրեմն դրական դիրքորոշումը երեխայի անձի հանդեպ, հավատը, հարգանքն ու անմիջական շփումը, ճիշտ մոտեցումը, հարաբերվելը, միասնական դժվարությունների հաղթահարումը կհանգեցնի բարոյապես և հոգեպես լավ մարդու ձևավորմանը:

Կան դեռահասներ, որոնց վարքը պայմանավորված է միջավայրի ազդեցությամբ, ընկերների վերաբերմունքով և կարծիքով: Նրանք չեն լսում ոչ մեկի խրատը, երբեմն ի վնաս իրենց ձգտում են հարմարվել միջավայրին: Նման երեխաների դրական և ուժեղ կողմերն օգտագործելով՝ անհրաժեշտ է ձևավորել համարժեք ինքնագնահատական, պետք է հասկացնել, որ յուրաքանչյուր մարդ կարող է սխալ թույլ տալ, բայց ուժեղ է նա, ով ընդունում է իր սխալը, թույլ մարդը՝ ոչ: Յուրաքանչյուր դեռահաս ունի դրական կողմ և այդ կողմն է պետք նկատել, ամրակայել, աճեցնել և հետզհետե զարգացնել, կարողանալ գիտելիքը նպատակային, կառուցողական սկզբունքով կիրառել: Այս տարիքում սովորողը շատ զգացմունքային է լինում, ձգտում է «մեծ» երևալ, ինքնահաստատվել, երբեմն չի կարողանում վերահասկել իրեն և դժվարությունները հաղթահարելիս սխալներ է թույլ տալիս: Այս շրջանում անհրաժեշտ է նրբանկատ մոտեցում, հարգանք անձի նկատմամբ, որպեսզի սովորողը կարողանա ձեռք բերել համակարգային և ինտեգրված մտածողություն, լինի անկաշկանդ, ազատ, ուրախանա իր ընկերների հաջողություններով, զգա փոխադարձ հարգանք և սեր: Դեռահասը այդ շրջանում պետք է որոնի, գտնի նորը, լավը, կարողանա

[4] Սուխոմլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» «Լույս» հրատարակչություն 1989թ.

ստեղծագործել և կատարելագործվել: Միայն բազմակողմանի գործունեության ընթացքում կձևավորվեն նրա բարոյական կերպարը, համոզմունքները, վարքագծի սովորույթները: Այստեղ շատ կարևոր է ուսուցչի և ծնողի ճիշտ մոտեցումը երեխային՝

- իրական կյանքում ճիշտ դրսևորելու,
- ազատ ժամանակը նպատակային կազմակերպելու,
- միջոցառումներին ակտիվ մասնակցելու
- մշակույթի, արվեստի նկատմամբ դրական վերաբերմունք սերմանելով՝ սեր առաջացնել այցելելու այդ օջախները:

Այսօրվա սերունդը պետք է քայլի ժամանակին համընթաց, անկաշկանդ, բանիմաց, գիտակցի իր իրավունքներն ու պարտականությունները, լինի ստեղծագործ, նախաձեռնող, օժտված բարոյական բարձր հատկանիշներով:

Համագործակցելով սովորողի ծնողի հետ՝ ուսուցիչը զարգացնում է նրա անհատականությունը, կիրառում դաստիարակության տարբեր մեթոդներ, խելացի իրականացնում մանկավարժական գործընթացում ուսուցման բոլոր նպատակները: «Ուսումն այն ծաղկի թերթերից մեկն է, որ կոչվում է դաստիարակություն»,-գրել է Սուխոմլինսկին[5]:

Հայտնի մտածողներից շատերն են իմաստուն մտքեր արտահայտել կրթության և դաստիարակության մասին (Ա. Մակարենկո, Կ. Ուշինսկի, Վ. Դալ, Մ. Դրագոմանով, Մ. Գորկի, Ա.Չեխով և այլք):

Ուսուցիչն ու ծնողը, միասնաբար աշխատելով, կարող են սովորողին բացահայտել՝ որպես ստեղծագործելու ընդունակություններով, նոր նախաձեռնություններով օժտված անհատի: Օգնելով միմյանց՝ ուսուցիչն ու ծնողը ավելի լավ են ճանաչում սովորողին, իմանում նրա առանձնահատկությունները՝ ուղորդելով այնպես, որ նա դրսևորի ինքնազարգացմանը միտված վարքագիծ:

Կան այնպիսի սովորողներ, որոնք մտավոր առաջադրանքը կատարելիս դժվարանում են, իսկ առարկայական, պրակտիկ գործողություններում նույն առաջադրանքը հեշտությամբ են կատարում: Ուսումնական դժվարությունը չհաղթահարելով՝ երեխայի մոտ աաստիճանաբար կուտակումներ են առաջանում և նա

[5] Սուխոմլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» «Լույս» հրատարակչություն 1989թ.

սկսում է չհասկանալ, չընկալել նյութը և, վերջապես, սկսում է չսովորել: Հետագայում այդ բացը լրացնելու, ուսուցանելու համար կպահանջվի երկար ժամանակ:

Ուրեմն մինչև մտավոր գործողության անցնելը, անհրաժեշտ է ձևավորել առարկայական, խոսքային գործողություններ: Այն իրականացնելու համար անհրաժեշտ են պայմաններ, հատուկ նյութեր, միջոցներ, առարկաներ:

Սուխոմլինսկին, լիարժեք ներկայացնելով ուսուցչի բնութագիրը, գրել է. «Լավ ուսուցչին այն մարդն է, որը սիրում է երեխաներին, նրանց հետ շփվելիս բերկրանք է ապրում, հավատում է, որ յուրաքանչյուր երեխա կարող է լավ մարդ դառնալ, բերակամանում է նրա հետ, սրտին մոտ ընդունում ուրախությունը, դառնությունը, գիտի մանկան հոգին, երբեք չի մոռանում, որ ինքն էլ է երեխա եղել»[6]:

Ուսուցչի համար կրկնակի ծանր է, երբ գործ է ունենում այնպիսի ծնողի հետ, որը չի ընդունում և չի հասկանում իր երեխայի սխալները և պաշտպան է կանգնում նրան կամ ծնող-երեխա հարաբերություններում ունի ներքին տարաձայնություններ:

Իմ աշխատանքային պրակտիկայում եղել են նման դեպքեր, որոնք դժվարությամբ են հարթվել: Այստեղ անհրաժեշտ է ուսուցչի հետևողական մանկավարժական լուրջ օգնություն ծնողին:

Ուսումնասիրելով ծնողի հետաքրքրությունները, յուրահատկությունները՝ անհրաժեշտ է պլանավորել նրա հետ մոտեցման ձևը, օժանդակել նրան դժվար իրավիճակից դուրս գալու, բարելավել գիտակցական մակարդակը ծնող-երեխա փոխհարաբերություններում, աշխատել ճնշել ծնողի սխալ ցանկությունները, բացահայտել լավը և հետևողականորեն առաջ տանել, կարողանալ տարբեր մեթոդներ կիրառել նրա սիրտը գրավելու, ուրիշի արտահայտած միտքը կամ կարծիքը սխալ չհասկանալու:

Ծնողը պետք է գիտակցի, որ ուսուցչի օգնությամբ կարող է իր երեխային բարոյապես լավ մարդ դարձնել: Նա հաշվի է առնում իր երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները, բազմակողմանի անհատական հետաքրքրությունները, հակումները, մտավոր և ֆիզիկական զարգացման ունակությունները: Վստահելով ուսուցչին, դպրոցին՝ անհարկի չի միջամտում դասարանային կյանքին, ճիշտ մոտեցում է ունենում ստեղծված առողջ և համերաշխ

[6]Սուխոմլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» «Լույս» հրատարակչություն 1989թ.

մթնոլորտում մշակված կրթական ռազմավարությանը, ապահովում է երեխայի վարքագծի առաջընթացը:

Ուսուցչի և ծնողի միասնական աշխատանքը երկար ճանապարհ պիտի անցնի և այն պահանջում է համբերություն: Արդյունքում կունենանք ծնողի օբյեկտիվ մոտեցումը երեխային: Հասկանալով երեխայի սխալները՝ ծնողը ճիշտ վերաբերմունք կդրսևորի տարիքային առանձնահատկությունների հետ կապված, կլսի մյուսների կարծիքը, կընկալի ճիշտը, հետո կարտահայտվի, կցուցաբերի ակտիվություն զրույցի, զեկուցումների, քննարկումների ժամանակ:

Ծնողը պետք է գիտակցի կրթության և դաստիարակության գործընթացում իր կարևոր դերը, մասնակցությունը: Ուսուցիչն էլ իր հերթին պետք է աջակցի ծնողին ձեռք բերել հոգեբանամանկավարժական գրագիտություն, անհատական մոտեցում ցուցաբերի սովորողին՝ ժամանակին ճիշտ կողմնորոշվելու, տարբեր դժվար իրավիճակներից դուրս գալու, հաջողության հասնելու համար:

Լավագույն ուսուցիչը նա է, ով կամքի ուժ ունի, խոսքով ասում և արարքով անում է նույն բանը: Կամքի մեծ ուժ ունեցող ուսուցիչը կհասնի հաջողությունների, եթե վճռականորեն է տրամադրված, հաստատակամ է իր որոշումների մեջ, կարողանում է տիրապետել և պահանջկոտ լինել ոչ միայն երեխայի, ծնողի, այլև իր նկատմամբ:

Այսօր ուսուցիչը դժվար, բարդ իրավիճակում կարող է հայտնվել. նա ուսուցման գործընթաց է իրականացնում, բայց քննադատության է արժանանում կամ սովորողը մերժում է ուսուցչի հեղինակությունը: Բարեփոխումների պայմաններում երբեմն ուսուցչի նկատմամբ նվազում է ծնողների վստահությունը, երբ չեն նկատում, չեն ընկալում իրական դասավանդման նոր մոտեցումները, գաղափարներն ու նպատակները:

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծնող-դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Սա այն հարթակն է, որտեղ թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Ծնողական ժողովներում ուսուցչի նախապատրաստած հարցաթերթերի, տարբեր թեմաների շուրջ քննարկումների ժամանակ կառուցողական մթնոլորտում հարկավոր է հաշվի առնել ծնողի կարծիքը, տեսակետը: «Իմ դերակատարումը ուսուցման գործընթացում», «Ընտանիքում իմ օգնությունը երեխային», «Իմ նախաձեռնությունը հանրօգուտ աշխատանքում երեխային ներգրավելու» աշխատանքների հիմքում ընկած են վստահություն, լավատեսություն, հավատ:

Շատ հաճախ ծնողները ցուցաբերում են անհավասարակշիռ ու պաշտպանողական վարքագիծ: Մինչդեռ, շատ կարևոր է արձանագրել խնդիրը, դնել այն քննարկման, որպեսզի հիմնախնդիրներն ու բացթողումները շտկելու լուծումներ առաջադրվեն: Ծնողական ժողովների ընթացքում կարող են ներկա գտնվել նաև այլ ուսուցիչներ, սոցմանկավարժներ, հոգեբաններ: Շատ կարևոր է սոցմանկավարժի, հոգեբանի համագործակցությունը ԿԱՊԿՈՒ աշակերտի ծնողի հետ: Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը հոգեբանական խորհրդատվությամբ աջակցում է ծնողներին (կամ նրանց օրինական ներկայացուցիչներին), մանկավարժներին և կրթական գործընթացի այլ մասնակիցներին սովորողների զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերում, ինչպես նաև տալիս է անհրաժեշտ տեղեկատվություն երեխայի զարգացման համար լիարժեք պայմանների

(այդ թվում՝ առանձնահատուկ) ստեղծման վերաբերյալ:[7] Ծնողները կարող են բարդ խնդրի պարզ լուծումներ առաջարկել: Ծնող-ուսուցիչ-մասնագետ համագործակցությունը կնպաստի սովորողի զարգացմանը, ուսուցման կազմակերպման համապատասխան միջավայրի ստեղծմանը, կրթական կարիքների բավարարման արդյունավետ ուղիների որոնմանը: Այսպես քննարկումն ավելի արդյունավետ և կառուցողական բնույթ կարող է կրել: Ծնող-ուսուցիչ համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել ուսուցչի և դպրոցի մյուս մանկավարժական աշխատողների աջակցության և օգնության վրա:

Ծնողները գիտակցում են, որ միայն դպրոցի հետ համագործակցելը կօգնի հաջողությամբ լուծել իրենց երեխաների կրթական խնդիրները և կապահովի նրանց համար բարենպաստ կրթական միջավայր: Սակայն ոչ բոլոր ծնողներն են գիտակցում, որ երեխայի կրթական հաջողությունները մեծապես կախված են նաև նրանից, թե որքան են իրենք կարողանում ժամանակ տրամադրել, օգնել, աջակցել երեխային, որքանով են տանը հարմարություններ և ընտանեկան նպաստավոր, ջերմ միջավայր ստեղծում նրանց ուսումնառության, ազատ ժամանակի կազմակերպման, հոգեկան ու ֆիզիկական առողջության պահպանման համար: Որքանո՞վ են կրթությունը, դաստիարակությունը, ուսումն ու գիտելիքը տվյալ ընտանիքում արժեք, որքանո՞վ է իր կյանքին վերաբերող խնդիրների լուծման ու համապատասխան որոշումների ընդունման գործում երեխայի մասնակցությունը և ձայնը լսելի ընտանիքում: Ծնողների մի մասն էլ մոռանում է, որ իրենց օրինակը երեխաների համար ընդօրինակման օբյեկտ է, և իրենք ստիպված են նրանց ներկայությամբ սթափ և հավաքված լինել: Իհարկե, այս բոլոր հարցերում ընտանիքի առաջին և շատ դեպքերում, միակ օգնականը ուսուցիչն է, ով կարող է ծնողին գիտելիքներ հաղորդել և աջակցել նրանց երեխաների համար ընտանեկան ջերմ մթնոլորտ ստեղծելու գործում:[8]

Ուսուցիչներն ու ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Ուսուցչի հետ համագործակցության արդյունքում ծնողը սկսում է վերանայել իր պահվածքն ու

[7] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 հոդված IX , կետ1,ենթակետ10
[8]https://aspu.am/website/images/files/87fdba42.pdf

փորձում երեխայի հետ հարաբերություններում լինել ավելի հարմարվող ու հանդուրժող: Ծնողի համար այդ համագործակցության արդյունքում հասկանալի են դառնում սեփական երեխայի պահանջմունքները, ցանկություններն ու երազանքները, քանի որ ուսուցչից ստացած տեղեկատվության հիմնական մասին նա չի տիրապետում:

Այսպիսով ուսուցիչ-ծնող համագործակցության շնորհիվ ծնողի համար նկատելի փոփոխություններից են.

- ավելի հոգատար դառնալը,
- երեխայի ձեռքբերումների գնահատումը,
- ինքնավստահությունը որոշումներ կայացնելիս,
- մեծ ուշադրություն դարձնելը սեփական գիտելիքների մակարդակի բարձրացմանը,
- երեխային հնարավորություն տալը իր սեփական տեսակետները, հիմնխնդիրները վստահորեն ներկայացնելուն,
- դրական հարաբերությունների ստեղծումը երեխայի ուսուցիչների հետ,
- երեխայի հիմնխնդիրները լուծելու նպատակով որոշակի միջոցների կիրառումը:

Այսպիսով, կարող ենք վստահ ասել, որ ուսուցչի համագործակցումը սովորողի ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ սովորողի կրթության կազմակերպման ու դաստիարակության մեջ ունի առանցքային նշանակություն, քանի որ լավ ու գիտակից սերունդ ունենալը թե՛ դպրոցի, թե՛ ընտանիքի համատեղ ջանքերի գրավականն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտելով ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, վերլուծելով խնդիրը՝ եկել եմ այն եզրակացության, որ ուսուցչի և ծնողի ճիշտ համագործակցությունը խթանում է երեխայի մտավոր, հոգեբանական գործընթացի զարգացմանն ու արդյունավետությանը, արժեհամակարգի ձևավորմանը:

1. Մտավոր հետաքրքրությունը զարգացնում է խոսք, տրամաբանություն, ակտիվացնում ճանաչողություն, լեզվամտածողություն, ձևավորում աշխատանքային կարողունակություն:

2. Հոգեբանական գործընթացի զարգացումը երևան է գալիս դեռ փոքր հասակից: Այն աստիճանաբար ձևավորվելով և զարգանալով ընտանիքում, համագործակցելով մեծահասակների հետ՝ իրական շփման շնորհիվ հուզական վիճակից անցում է կատարում խոսքային, նյութական և հոգևոր արժեքների յուրացմանը: Մեծերի հետ շփվելիս ձևավորվում են անձնային որակները, ինքնագիտակցումը, զարգանում է ֆիզիկական և հոգևոր մտածողությունը, պահպանվում բարոյահոգեբանական առողջությունը: Բարենպաստ շփումը նպաստում է երեխայի բազմակողմանի հոգեկան զարգացմանը:

3. Յուրաքանչյուր մանկավարժի գերխնդիրը արժեհամակարգի ձևավորումն է, իսկ ուսուցչի և ծնողի համատեղ նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ է, որ սովորողի մեջ կարևորվում են կրթական, բարոյական, ազգային և այլ մնայուն արժեքներ: Նրանց համագործակցային փոխհարաբերությունների միջոցով իրագործվում է ուսումնառության գործընթացը՝ կրթություն, դաստիարակություն, արժեհամակարգի արժեքների զարգացում:

Երբ սովորողը գիտակցորեն կզգա և կհասկանա՝ ինչ պիտի անի և կատարի կրթության և դաստիարակության գործընթացում, ապա արդյունքում իր ցանկություններն ու կարողունակությունները կզուգորդվեն և մենք կունենանք այն, ինչի ձգտում ենք՝ կիրթ, դաստիարակված անձ:

Դպրոցի ծրագրի հիմնական պահանջների կատարման, ուսուցչի առաքելության

իրականացման ողջ գործունեության ծավալման մեջ հանրակրթական նպատակների և ուսումնառության տարբեր խնդիրների լուծման դեպքում ակնկալվող վերջնարդյունքները կարող են ձևավորել սովորողի կարողությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808
2. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf 2015թ էջ4
3. www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ Հանրակրթության մասին օրենք
4. https://aspu.am/website/images/files/87fdba42.pdf
5. Սուխոմլինսկի «Սիրտս նվիրում եմ երեխաներին» «Լույս» հրատարակչություն 1989թ.
6. Վ.Վ. Վորոնցով «Բանականության սիմֆոնիա» էջ 195
7. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788